ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն՝ Կարեն Անդրեասյան, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ

Գործուղման վայրը և ժամկետը՝

- Ֆրանսիայի Հանրապետություն, ք. Փարիզ 2026 թվականի մարտի 21-ից մարտի 28-ը ներառյալ,

Գործուղման նպատակը՝

- Ֆրանսիայի Հանրապետություն, ք. Փարիզ աշխատանքային այցի նպատակը՝ «Փարիզի արբիտրաժային շաբաթ 2026» (Paris Arbitration Week) միջազգային համաժողովի շրջանակներում կայացած բարձր մակարդակի քննարկումներին և մասնագիտական միջոցառումներին մասնակցություն:

Հանդիպումները, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

Փարիզում կայացած աշխատանքային այցի շրջանակներում իրականացվել է մասնակցություն մի շարք քննարկումների, որոնք առանցքային նշանակություն ունեն միջազգային արբիտրաժային վարույթներում պետության շահերի արդյունավետ ներկայացման և իրավական պաշտպանության մեխանիզմների կատարելագործման համար:

Մասնավորապես, քննարկման առարկա են դարձել առևտրային և ներդրումային արբիտրաժների միջև առկա իրավական սահմանագծերը, ինչպես նաև ներդրումային պայմանագրերից բխող վեճերի առանձնահատկությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Ֆրանսիայում արբիտրաժային վճիռների չեղարկման վարույթների վերջին զարգացումներին և գործնական մոտեցումներին, ինչը կարևոր է ֆրանսիական իրավազորության ներքո ընթացող գործընթացների կանխատեսելիության ապահովման տեսանկյունից:

Այցի ընթացքում քննարկվել են նաև կառուցապատման ոլորտի արբիտրաժային վարույթներում պայմանագրերի դադարեցման և վնասի չափի հաշվարկման բարդ խնդիրները, ինչպես նաև ներկայիս աշխարհաքաղաքական փոփոխվող իրավիճակում արբիտրաժի չեզոքության և արդյունավետության նոր չափանիշները: Մասնակցություն է ապահովվել կլոր-սեղան քննարկմանը, որի ընթացքում անդրադարձ է կատարվել ապագա հնարավոր վեճերի կանխարգելմանը և կառավարման ռազմավարություններին:

Աշխատանքային քննարկումներն իրենց մեջ ներառել են նաև մինչև 2030 թվականը միջազգային արբիտրաժի ապագա միտումները, ներառյալ՝ ռիսկերի կառավարումը, նոր կարգավորումները և հակահայցային արգելանքների կիրառման աճող պրակտիկան՝ անկայուն իրավական միջավայրերում:

Համաժողովի շրջանակներում Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչը մի շարք հանդիպումներ և քննարկումներ է անցկացրել միջազգային հեղինակավոր իրավաբանական ընկերությունների ներկայացուցիչների և արբիտրաժային ոլորտի ճանաչված մասնագետների հետ:

Հարգանքով՝
Կարեն Անդրեասյան

Recoverable Signature

X

Ստորագրող
ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
2009770196

2026-04-01 12:22:21 GMT+4
Հավաստված է ԷԿԵՄԿ-ի կողմից

Signed by: ANDREASYAN KAREN 2009770196

01.04.2026թ.